ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 123-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԱԳՐԱՏ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բռնցքամարտի միջազգային կարգի սպորտի վարպետ Բագրատ Օհանյանն ունի առողջական լուրջ խնդիրներ: Նրա մոտ հայտնաբերված եզակի հիվանդության հետագա բարացումը կանխելու համար պահանջվում է թանկարժեք բուժում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 7-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Միխակ Ղազարյանի 2020 թվականի սեպտեմբերի 02-ի համայնքի ղեկավարին ուղղված զեկուցագիրը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կատարել բացառություն Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջների և Բագրատ Օհանյանին որպես դրամական օգնություն հատկացնել 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Տ. Հովհաննիսյան____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս.Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա.Վարդանյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Ղարաղազարյան ____________

Հ.Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«08» սեպտեմբերի 2020 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 124-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ՖԻԶԻԿԱՊԵՍ ՄԱՇՎԱԾ ԳՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հոկտեմբերի 31-ի N 787-Ն 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 2-րդ, 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստինե Սահակյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված, կազմակերպության հաշվեկշռում առկա ֆիզիկապես մաշված՝ օգտագործման համար ոչ պիտանի, չկարդացվող գրքերի դուրսգրումը թույլատրելու վերաբերյալ գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2020թվականի օգոստոսի 18-ին, N 11317 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել կազմակերպության հաշվեկշռում առկա ֆիզիկապես մաշված գրքերի դուրսգրումը:

2.Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:

3.Դուրսգրված գրքերի՝ օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված ֆինանսական միջոցները մուտքագրել Գյումրի համայնքի բյուջե, միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25) Դեմ (0) Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Տ. Հովհաննիսյան ____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս.Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա.Վարդանյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Ղարաղազարյան ____________

Հ.Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«08» սեպտեմբերի 2020 թվական**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 125-Ա**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐՍԵՆ ՌՈՒԲԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի թիվ 3 հասցեի տան տարածքի իրացման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետով և հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Աբովյան փողոցի թիվ 3 հասցեի անշարժ գույքի սեփականատեր Արսեն Ռուբիկի Մարտիրոսյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 12037 թվագրմամբ) ու «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված շինությունների շուկայական արժեքի գնահատման վերաբերյալ 2020 թվականի օգոստոսի 26-ին տրված թիվ 08262012 հաշվետվությունը՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Աբովյան փողոցի թիվ 3 հասցեի անշարժ գույքին հասցվելիք վնասների փոխհատուցման նպատակով դրամական միջոցներ հատկացնելուն:
2. Հատկացվելիք դրամական միջոցների չափ սահմանել 4 000 000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրի համայնքի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարը հատկացնել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/6/1 գործառական դասակարգման (4728) «Բնակարանային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ս. Բալասանյան ____________

Ա. Ադամյան ____________

Հ. Կարապետյան ____________

Լ. Խաչատրյան ____________

Տ. Հովհաննիսյան____________

Մ. Սահակյան ____________

Լ. Սանոյան ____________

Վ. Եդիգարյան ____________

√ Ա. Գրիգորյան ____________

Կ. Միքայելյան ____________

Տ. Փանոսյան ____________

Գ. Գրիգորյան ____________

Կ. Թաթարյան ____________

Ս. Աստոյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Ռ. Սարգսյան ____________

Ա. Մխիթարյան ____________

Ս.Մարտիրոսյան ____________

Լ. Բարսեղյան ____________

Ա.Վարդանյան ____________

Ա. Գրիգորյան ____________

Ա. Խաչատրյան ____________

Գ. Մաթևոսյան ____________

Ա. Ղարաղազարյան ____________

Հ.Պողոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**քաղաք Գյումրի**
**«08» սեպտեմբերի 2020 թվական**

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 08-ի
N 126-Լ որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

## I. Ընդհանուր դրույթներ

1. Գյումրի համայնքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու սույն կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Գյումրի համայնքի վարչական տարածքում ընտանի կենդանիներին հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները, և տարածվում են Գյումրի համայնքի վարչական տարածքում գտնվող ընտանի կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

2. Կանոնները չեն տարածվում գիտական, գիտահետազոտական, բժշկական, ինչպես նաև ծառայողական նպատակներով ընտանի կենդանիներին օգտագործող և պահող համապատասխան թույլտվություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) ընտանի կենդանի (այսուհետ՝ կենդանի)՝ մարդու կողմից պատմականորեն ընտելացված կենդանի,

2) գյուղատնտեսական ընտանի կենդանի՝ մարդու կողմից սննդամթերքի արտադրության համար պատմականորեն ընտելացված և բուծվող կենդանի,

3) ընտանի կենդանի տիրապետող (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և(կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին:

## II. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

**4. Տիրապետողն իրավունք ունի՝**

1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան,

2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ,

3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:

**5. Տիրապետողը պարտավոր է՝**

1) սույն Կանոններին համապատասխան 15-օրյա ժամկետում իրականացնել նոր ձեռք բերված կենդանու հաշվառումը,

2) կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նկատմամբ նրանց պահանջները,

3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները, այդ թվում՝ իրականացնել կենդանու տարեկան պատվաստումը կատաղության դեմ,

4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահության կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանն վնաս հասցնելու մասին՝ կենդանուն տեղափոխելով մոտակա անասնաբուժական կազմակերպություն՝ զննման և կարանտինային հսկողություն իրականացնելու համար,

5) անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ-մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն,

6) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ,

7) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի, մայթերի, փողոցների, սիզամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը,

8) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում այն փոխանցել այլ անձի: Արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության,

9) կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

10) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման դուրս հանելը,

11) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով տիրապետողի համար սահմանված այլ նորմերը և կանոնները:

## III. Կենդանիների հաշվառումը

6. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու համար:

7. Կենդանիներն հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:

8. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները:

## IV.Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

19. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել օրենսդրությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

20. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմաններ:

21. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:

22. Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խուտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

23. Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը:

**24. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝**

1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ:

2) ագրեսիվ շանը պահել դնչկալով՝ մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում: Բնակելի թաղամասերում ագրեսիվ շների զբոսանքը թույլատրվում է իրականացնել միայն դնչկալի և կապի առկայության դեպքում: Հասարակական վայրերում տիրապետողը պետք է ագրեսիվ շանը պահի կարճ կապի վրա և դնչկալով:

3) առանց դնչկալի և կապի շանը զբոսանքի տանելու առանձնացված վայրերը սահմանվում են Գյումրի համայնքի ղեկավարի կողմից:

25. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

26. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումը կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:

27. Շներ տիրապետողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում:

9. Հաշվառումն իրականացնում է Գյումրի համայնքի ղեկավարը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:

10. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Գյումրի համայնքի վարչական տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում:

11. Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և անհատականացնող համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում:

12. Կենդանուն անհատականացնող համարը նշվում է կենդանու վզնոցի վրա:

13. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի Կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ տիրապետողն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:

14. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու նախկին տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:

15. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն անհատականացնող համարի նշումով կենդանու վզնոցն և գրանցման վկայականը՝ կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար:

16.Գրանցման գրքում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,

2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները,

3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),

4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը,

5) կենդանու անհատականացնող համարը,

6)տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,

7) այլ տեղեկություններ:

18. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

28. Կենդանիների վաճառքը թույլատրվում է իրականացնել մասնագիտացված խանութներում, կենդանիների շուկաներում կամ այդ նպատակի համար հարմարեցված հատուկ առանձնացված վայրերում՝ անասնաբուժական հատուկ վկայականի առկայության դեպքում:

29. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

30. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարացված սարքերում:

31. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների վրա,

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցներում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակույթի, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում,

6) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը:

7) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ կենդանիների ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

## V. Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

32. Տիրապետողները իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը:

33. Կենդանիների դիերի թաղումն իրականացվում է այդ նպատակով Գյումրի համայնքի ղեկավարի կողմից հատուկ առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

## VI. Գյուղատնտեսական ընտանի կենդանիներ պահելու առանձնահատկությունները

34. Գյուղատնտեսական ընտանի կենդանիներ պահելու վերաբերյալ սույն Կանոնների դրույթները տարածվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն գլխի դրույթներին:

35. Գյումրի համայնքի վարչական տարածքում կենդանի պահելու թույլտվությունը տալիս է համայնքի ղեկավարը:

36. Կենդանի պահելու թույլտվությունը կարող է տրվել այն անձին, ով բնակվում է առանձնատանը և ունի գյուղատնտեսական ընտանի կենդանի պահելու համար անհրաժեշտ պայմաններ:

37. Կենդանիների զբոսանքը կամ արոտը կարող է կազմակերպվել տիրապետող անձի հսկողության ներքո՝ միայն դրա համար հատուկ նախատեսված վայրերում:

38. Արգելվում է կենդանու ազատ կամ կապված արոտը դրա համար չհատկացված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):

39. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներով:

40. Մեղվապահները պարտավոր են մեղուները պահել իրենց տարածքներում, որոնք պետք է սահմանազատված լինեն երկու մետրից ոչ պակաս բարձրության պարսպով:

## VII. Կանոնները խախտելու պատասխանատվությունը

41. Սույն կանոնների խախտումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

## VIII. Անցումային դրույթներ

42. Տիրապետողները պարտավոր են հաշվառել իրենց տիրապետության ներքո գտնվող կենդանիներին՝ Կանոններն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 126-Լ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոններ՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

| Կողմ (19) | Դեմ (0) | Ձեռնպահ (4) |
|---|---|---|
| Ս. Բալասանյան ________ | | Ս. Աստոյան ________ |
| Ա. Ադամյան ________ | | Ա.Խաչատրյան ________ |
| Հ. Կարապետյան ________ | | Ռ.Սարգսյան ________ |
| Լ. Խաչատրյան ________ | | Ա.Մխիթարյան ________ |
| Տ. Հովհաննիսյան ________ | | |
| Մ. Սահակյան ________ | | |
| Լ. Սանոյան ________ | | |
| Վ. Եղիգարյան ________ | | |
| Ա. Գրիգորյան ________ | | |
| Կ. Միքայելյան ________ | | |

Գ. Գրիգորյան _______________

Կ. Թաթարյան _______________

Ս.Մարտիրոսյան _______________

Լ. Բարսեղյան _______________

Ա.Վարդանյան _______________

Ա. Խաչատրյան _______________

Գ. Մաթևոսյան _______________

Ա. Ղարաղազարյան _______________

Հ.Պողոսյան _______________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**քաղաք Գյումրի**
**«08» սեպտեմբերի 2020 թվական**

Հավելված N 1՝
ՀՀ Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի
08 -ի N 127 -Ա որոշման

**Գյումրի համայնքում գոյացող կենցաղային աղբի ծավալների մոտավոր հաշվարկը և աղբարկղերի դատարկման հաճախականություն**

| ԱՂԲԻ ԾԱՎԱԼ ԱՄԱՌԱՅԻՆ ՍԵԶՈՆԻ | | | |
|---|---|---|---|
| **Արկղերի քանակը** | | | **890** |
| **Օրական 1 անգամ սպասարկվող արկղեր** | | | |
| *Արկղերի քանակը* | *արկղի ծավալը խ.մ* | *Աղբի ծավալը 1 օրում* | |
| 640 | 0,8 | 512 | 512 |
| **Օրական 2 անգամ սպասարկվող արկղեր** | | | |
| *Արկղերի քանակը* | *արկղի ծավալը խ.մ* | *Աղբի ծավալը 1 օրում* | |
| 250 | 0,8 | 200 | 400 |
| **Աղբի ծավալը 1 օրում/խ.մ** | | | **912** |
| **Խտացման գործակից՝ 30%** | | | **273,6** |
| **Աղբի ծավալը 1 ամսում/խ.մ** | | | **8208** |
| **Աղբի ծավալը 9 ամսում/խ.մ** | | | **73872** |

| ԱՂԲԻ ԾԱՎԱԼ ՁՄԵՌԱՅԻՆ ՍԵԶՈՆԻ | | | |
|---|---|---|---|
| **Օրական 1 անգամ սպասարկվող արկղեր** | | | |
| *Արկղերի քանակը* | *արկղի ծավալը խ.մ* | *Աղբի ծավալը 1 օրում* | |
| 790 | 0,8 | 632 | 632 |
| **Օրական 2 անգամ սպասարկվող արկղեր** | | | |
| *Արկղերի քանակը* | *արկղի ծավալը խ.մ* | *Աղբի ծավալը 1 օրում* | |
| 100 | 0,8 | 80 | 160 |
| **Աղբի ծավալը 1 օրում/խ.մ** | | | **792** |
| **Խտացման գործակից՝ 30%** | | | **237,6** |
| **Աղբի ծավալը 1 ամսում/խ.մ** | | | **7128** |
| **Աղբի ծավալը 3 ամսում/խ.մ** | | | **21384** |
| **ԱՂԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՎԱԼ Խ.Մ.** | | | **95256** |

«Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ տնօրենի ժ/պ ____________________ Վ. Սամսոնյան

Հավելված N 2՝
ՀՀ Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 08–ի
N 127-Ա որոշման

*Կենցաղային աղբատար մեքենաներ*

| N | Պետհամարանիշ | Մակնիշը | Մեքենայի թափքի ծավալը /խմ/ | Երթերի քանակը 1 ամսում | 1 ամսում տեղափոխված աղբի ծավալը /խմ/ | 1 տարում տեղափոխված աղբի ծավալը /խմ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 641 LL 70 | Կամազ 53215 | 22 | 47 | 1034 | 12408 |
| 2 | 642 LL 70 | Կամազ KO440-5 | 22 | 57 | 1254 | 15048 |
| 3 | 643 LL 70 | Կամազ KO440-5 | 22 | 30 | 660 | 7920 |
| 4 | 849 LL 70 | ՄԱԶ 5902A2-390 | 18,5 | 30 | 555 | 6660 |
| 5 | 857 LL 70 | ՄԱԶ 5902A2-390 | 18,5 | 51 | 943,5 | 11322 |
| 6 | 851 LL 70 | ՄԱԶ 5902A2-390 | 18,5 | 22 | 407 | 4884 |
| 7 | 842 LL 70 | ՄԱԶ 5902A2-390 | 18,5 | 30 | 555 | 6660 |
| 8 | 196LL70 | ԳԱԶ 53 | 7 | 10 | 70 | 840 |
| 9 | 134LL70 | ԳԱԶ 3307 | 7 | 14 | 98 | 1176 |
| 10 | 234LL70 | ԳԱԶ 3307 | 7 | 7 | 49 | 588 |
| **Ընդամենը՝** | | | | **298** | **5625,5** | **67506** |

*Ոչ կենցաղային ինքնաթափ մեքենաներ*

| N | Պետհամարանիշ | Մակնիշը | Մեքենայի թափքի ծավալը /խմ/ | Երթերի քանակը 1 ամսում | 1 ամսում տեղափոխված աղբի ծավալը /խմ/ | 1 տարում տեղափոխված աղբի ծավալը /խմ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 10UL914 | ԳԱԶ 53 | 6 | 54 | 324 | 3888 |
| 2 | 127LL70 | ՄԱԶ 5549 | 6 | 31 | 186 | 2232 |
| 3 | 269SO45 | ԶԻԼ ՄՄԶ-555 | 6 | 35 | 210 | 2520 |
| 4 | 563SO45 | ԶԻԼ ՄՄԶ-4502 | 6 | 42 | 252 | 3024 |
| 5 | 618SL45 | ՄԱԶ 5549 | 6 | 30 | 180 | 2160 |
| 6 | 732LL70 | ԶԻԼ ՄՄԶ 4502 | 6 | 33 | 198 | 2376 |
| 7 | 753SL45 | ԿԱՄԱԶ 55111 | 9 | 13 | 117 | 1404 |
| 8 | 633LL70 | ԿԱՄԱԶ 55111-15 | 7 | 12 | 84 | 1008 |
| 9 | 634LL70 | ԿԱՄԱԶ 55111-15 | 7 | 15 | 105 | 1260 |
| **Ընդամենը՝** | | | | **265** | **1350** | **19872** |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| *Տրակտորներ* | | | | | | |
| 1 | 2154LS | ՉԻՆՎԱՆ 50.4 | 1,5 | 13 | 19,5 | 234 |
| 2 | 2159LS | ՉԻՆՎԱՆ 25.4 | 2 | 11 | 22 | 264 |
| **Ընդամենը՝** | | | | **24** | **41,5** | **498** |
| **Ընդամենը՝** | | | | **289** | **1391,5** | **20370** |

Հավելված N 3՝
ՀՀ Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի
08 –ի N 127 -Ա որոշման

***Գյումրի համայնքում փողոցների, մայթերի, սիզամարգերի, ինչպես նաև հրապարակների մաքրման մակերեսները,մաքրման հաճախականությունը, մաքրող բանվորների տեղաբաշխման սխեմա***

| N | Փողոցի անվանում | Հաճախականություն | Փողոցի երկարությունը /մ/ | Փողոցի լայնությունը /մ/ | Մաքրվող մակերեսն ըստ փողոցի և մայթի լայնության | Աշխատողների քանակ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 8 |
| 1 | Վ. Սարգսյան փ. | ամեն օր | 2150 | 6 | 12900 | 10 |
| 2 | Կ. Դեմիրճյան փ. | ամեն օր | 1120 | 6 | 6720 | |
| 3 | Մարատի փողոց | ամեն օր | 247 | 6 | 1482 | |
| 4 | Հովսեփյան փ. | ամեն օր | 270 | 6 | 1620 | |
| 5 | Շինարարների փ. (Թետչեր) | ամեն օր | 730 | 6 | 4380 | |
| 6 | Եսայան փ. | ամեն օր | 680 | 6 | 4080 | |
| Ընդամենը | | | | | 31182 | |
| 7 | Գ.Նժդեհի փ. | ամեն օր | 1500 | 6 | 9000 | 10 |
| 8 | Գ.Նժդեհի փողոցին հարակից՝ դիակահերձարան տանող փողոց | ամեն օր | 400 | 6 | 2400 | |
| 9 | Պողոշյան փ. | ամեն օր | 600 | 6 | 3600 | |
| 10 | Մ. Մկրտչյան փ. | ամեն օր | 700 | 6 | 4200 | |
| 11 | Չայկովսկի փ. | ամեն օր | 390 | 6 | 2340 | |
| 12 | Շարա-Տալյան փ. | ամեն օր | 300 | 6 | 1800 | |
| 13 | Ներսես Շնորհալի փ. | ամեն օր | 350 | 6 | 2100 | |
| 14 | Շչեդրին փ. | ամեն օր | 1000 | 6 | 6000 | |
| Ընդամենը | | | | | 31440 | |
| 15 | Իսահակյան փ. | ամեն օր | 2000 | 6 | 12000 | 4 |
| Ընդամենը | | | | | 12000 | |
| 16 | Խանջյան – Բարոնյան փ. | ամեն օր | 1400 | 6 | 8400 | 6 |
| 17 | Կոշտոյան փ. | ամեն օր | 980 | 6 | 5880 | |
| 18 | Կոշտոյանը Մանուշյան փողոցին կապող փողոց՝ 29 դպրոցի դիմաց | ամեն օր | 300 | 6 | 1800 | |
| 19 | Մանուշյան փ. | ամեն օր | 900 | 6 | 5400 | |
| Ընդամենը | | | | | 21480 | |
| 20 | Եսայան փ. Թիվ 15 դպրոցից մինչև Շերբինա փ. | 3 օրը 1 անգամ | 600 | 6 | 1200 | 4 |
| 21 | Մնջոյան փ. | ամեն օր | 560 | 6 | 3360 | |
| 22 | Տիմիրյազև փ. | ամեն օր | 400 | 6 | 2400 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 23 | Շչերբինա փ. Ռեպին | ամեն օր | 650 | 6 | 3900 | |
| 24 | Շչեդրին փ. վերջնամաս | ամեն օր | 1000 | 3 | 3000 | |
| Ընդամենը | | | | | 13860 | |
| 23 | Շիրակացի փող. Օզանյանից մինչև Ա.Մանուկյան | ամեն օր | 776 | 6 | 4656 | |
| 24 | Ալեք Մանուկյան փ. | ամեն օր | 900 | 6 | 5400 | |
| 25 | Ջիվանի փ. Ալեք Մանուկյանից մինչև Ռուսթավելի փ. | ամեն օր | 478 | 6 | 2868 | |
| 26 | Խաչատրյան փ. | ամեն օր | 219 | 3 | 657 | 5 |
| 27 | Կամո փ. | ամեն օր | 449 | 3 | 1347 | |
| 28 | Սարգսյան փ. | ամեն օր | 395 | 3 | 1185 | |
| Ընդամենը | | | | | 16113 | |
| 29 | Դուդկո փ. | ամեն օր | 400 | 6 | 2400 | |
| 30 | Բուլվարային փ. | ամեն օր | 1610 | 6 | 9660 | |
| 31 | Գործարանային փ. մինչև մայթի վերջ | ամեն օր | 300 | 6 | 1800 | 6 |
| 32 | Արագած թ. | ամեն օր | 870 | 6 | 5220 | |
| Ընդամենը | | | | | 19080 | |
| 33 | Օզանյան փ. | ամեն օր | 588 | 2 | 1176 | |
| 34 | Ղարսի խճղ. | ամեն օր | 1765 | 2 | 3530 | 1 |
| Ընդամենը | | | | | 4706 | |
| 35 | Տիգրան Մեծ փ. | ամեն օր | 1000 | 6 | 6000 | |
| 36 | Կայարանամերձ հր. | ամեն օր | 315 | 6 | 1890 | |
